



ՄԵՐ ԽՕՍՔԸ

Սիրելի աշակերտներ,

Մարտը իր հետ կը բերէ գարունը:

Գարունը տարուան այն եղանակն է, որուն ընթացքին բնութիւնը կը վերանորոգուի:

Այդ վերանորոգման հետ, կը ծաղկին մեր հոգիներն ու մեր ստեղծագործ միտքը: Գարունը կարծես կը բերէ մեզի նոր կեանք, նոր յոյս, նոր ուժ եւ առիթը կը ստեղծէ մեզի մտածելու բնութեան հրաշալիքներուն ու գեղեցկութիւններուն մասին: Ի զուր չէ, որ Բանաստեղծութեան Միջազգային օրը կը նշուի մարտ 21-ին, որ կը խորհրդանշէ գարնան սկիզբը:

Միջազգային այս գեղեցիկ օրուան առիթով, մենք ալ սիրելիներ, կարդանք բանաստեղծութիւններ: Մեր բանաստեղծները ամփոփ տողերով, մեծ հարստութիւն փոխանցած են մեզի: Կարդանք, որ ստանանք այդ շունչն ու ոգին: Կարդանք պահելու մեր լեզուն ու փորձենք գրել մենք ալ մեր կարգին:



ԿԻՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Ամէն տարի, մարտ 8-ին ամբողջ աշխարհը կը նշէ Կիներու Միջազգային օրը: Հակառակ մեր այսօրուան յառաջդիմած աշխարհին, կիներ տակաւին կը շարունակեն պայքարիլ անարդարութիւններու դէմ: Այս անարդարութիւններու շարքին կարելի է նշել խտրականութիւն կիներու եւ տղամարդոց միջեւ, անհաւասար աշխատավարձեր եւ կարգ մը այլ անհաւասարութիւններ ընկերային կեանքին մէջ:

Բնական է, որ այս պայքարը կը փոխանցուի սերունդէ սերունդ՝ նպատակ ունենալով ապահովել իրաւունքներու հաւասարութիւն, նկատի ունենալով կնոջ անուրանալի դերը մարդկութեան պատմութեան մէջ, ըլլայ ստեղծագործական թէ՛ գիտական ասպարէզներու մէջ:



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

1999 թուականէն սկսեալ, ամէն տարի, մարտ 21-ին, կը նշենք Բանաստեղծութեան Միջազգային օրը: Այս տօնը ընդունուեցաւ «UNESCO»-ի 30-րդ նստաշրջանի ընթացքին, նշելով թէ բանաստեղծութիւնը կրնայ պատասխան տալ ներկայիս մարդու սուր եւ խոր հոգեւոր հարցերուն: «UNESCO»-ի այս որոշումը կու գար քաջալերելու բանաստեղծական ստեղծագործութիւնը, ընթերցանութիւնը եւ հրատարակչութիւնը:

Նշենք սակայն, թէ այս քայլը, այս տօնի ստեղծման առաջին փորձը չէր: Նման նախաձեռնութիւններ տեղի ունեցած են 1930-ական թուականներուն: Այսպէս՝ 1938-ին, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Օհայօ նահանգին մէջ, բանաստեղծութեան օր հռչակուած է 15 Հոկտեմբերը, յիշելով հռոմէացի ամէնէն նշանաւոր բանաստեղծներէն Վերկիլիոսի ծննդեան օրը: Այնուհետեւ Հոկտեմբեր 15-ը որպէս համաշխարհային բանաստեղծութեան օր, սկսած է նշուիլ նաեւ այլ երկիրներու մէջ:

Հայաստանի մէջ Բանաստեղծութեան Միջազգային օրը կը նշուի 2010 թուականէն ի վեր, ամէն տարի, մարտ 21-ին: Այս օրուան խորհուրդին տարուէ տարի կը միանան նոր մշակութային կազմակերպութիւններ՝ իրականացնելով տարբեր բնոյթի ձեռնարկներ: Դպրոցներու, թանգարաններու, գրադարաններու եւ մշակութային կեդրոններու մէջ կը կազմակերպուին հանդիպումներ բանաստեղծներու հետ, տեղի կ'ունենան գիրքերու շնորհանդէսներ, ընթերցումներ, հանրային քննարկումներ եւ այլ ձեռնարկներ:

ՍԻՐԵՆՔ ԿԱՐԴԱԼ
ԻՆՉՈ՞Ւ ԿԱՐԵՒՈՐ Է ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆԸ:

Ընթերցանութիւնը կարելի է առողջութեան եւ մտային զարգացման համար:
Ընթերցանութիւնը կը զարգացնէ միտքը եւ կը հարստացնէ մեր գիտելիքները:
Ընթերցանութիւնը կը նուազեցնէ ճնշումը (stress-ը) եւ կը սրէ քննադատական մտածողութիւնը:
Ընթերցանութեամբ կը բարելաւուի մեր յիշողութիւնը, կը բարելաւուին նաեւ մեր կեդրոնացումն ու մեր ուշադրութիւնը:
Ընթերցանութեամբ կը զարգանանք եւ կը զարգանայ մեր մէջ ստեղծագործական ոգին:
Ընթերցանութեամբ կը սորվինք նոր բառեր, որոնք մեզի կ'օգնեն աւելի լաւ ձեռով արտայայտելու մեր մտքերը թէ՛ խօսելու պարագային, թէ՛ գրելու ժամանակ:
Ընթերցանութեամբ կը զօրանայ նաեւ մեր երեւակայութիւնը:



ԹԱԼԷԱԹ ՓԱՇԱՅԻՆ ՍՊԱՆՆՈՒԹԻՒՆԸ



Սողոմոն Թեհլիրեան



Արմէն Գաբօ

Երբ Համաշխարհային Առաջին պատերազմը հասաւ իր աւարտին, Հայոց Յեղասպանութիւնը ծրագրող ու կազմակերպողներ՝ Էնվերը, Թալէաթը, Ճեմալը եւ տորթը. Նազըմը մահուան դատաւճիռ ստացան: Սակայն, անոնք փախուստի դիմեցին, եւ ոչ մէկ ճիգ թափուեցաւ արդարադատութիւնը իրականացնելու համար: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը սակայն չէր կրնար անպատիժ ձգել այդ ջարդարարները: Ուրեմն, 1919-ին, Դաշնակցութեան իններորդ Ընդհանուր ժողովին, Արմէն Գաբօյի ղեկավարութեամբ ծրագրուեցաւ «Նեմեսիս» գործողութիւնը: Սողոմոն Թեհլիրեան եղաւ այն անձը, որ կեանքի բերաւ վրէժխնդրութեան ծրագիրը:

15 մարտ 1921-ին, Պերլինի մէջ, ճակտէն ստացած փամփուշտի հարուածով ինկաւ Հայոց Յեղասպանութեան գործադիր Թալէաթ փաշան: Թեհլիրեան տեղւոյն վրայ ձերբակալուեցաւ, եւ ապա դատաքննութեան ենթարկուեցաւ:

79 օր տեւած նախնական հարցաքննութենէ ետք, 2 յունիս 1921-ին սկսած դատաւարութիւնը իր աւարտին հասաւ 3 յունիսին, եւ Սողոմոն Թեհլիրեան ազատ արձակուեցաւ:

Հերոս Թեհլիրեանի այդ մէկ փամփուշտը հանդարտեցուց հայութեան հոգեկան տառապանքը եւ վերականգնեց հայու արժանապատուութիւնը:

ԳԻՆԻ ԼԻՑ

Աշխարհ սարսեց հայուն ահը,
Գետին ընկաւ թուրքին գահը,
Պատմեմ ձեզ Թալէաթին մահը,
Գինի լից, ընկեր ջան, գինի լից,
Խմողաց անոյշ, անոյշ, խմողաց անուշ:

Դաշնակցութիւնն ժողով արեց,
Շուն Թալէաթին մահ որոշեց,
Թեհլիրեանին բախտը բացուեց,
Գինի լից, ընկեր ջան, գինի լից,
Խմողաց անոյշ, անոյշ, խմողաց անոյշ:

Թալէաթ փաշան փախաւ Պերլին,
Թեհլիրեանը հասաւ ետին,
Զարկեց ճակտին, փռեց գետին,
Գինի լից, ընկեր ջան, գինի լից,
Խմողաց անոյշ, անոյշ, խմողաց անոյշ:

Թալէաթ փաշան դրին հողը,
Լուրը տարին իր ծեր մօրը,
Կեցցէ՛ Դաշնակ կամաւորը,
Գինի լից, ընկեր ջան, գինի լից,
Խմողաց անոյշ, անոյշ, խմողաց անոյշ:

Յիշատակդ միշտ փառաւոր,
Շիրիմիդ լոյս Քրիստափոր,
Մայիս 28 շնորհաւոր,
Գինի լից, ընկեր ջան, գինի լից,
Խմողաց անոյշ, անոյշ, խմողաց անոյշ:



ՆԵՄԵՍԻՍ

Յունական դիցաբանութեան մէջ, Նեմեսիսը վրէժի աստուածուհին էր, որ կը պատժէր բոլոր անոնք, որոնք կը խախտէին բարոյական եւ հասարակական օրէնքները:

Վրէժխնդրութեան այս աստուածուհիի անունով, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կազմակերպեց «Նեմեսիս» գործողութիւնը, որուն նպատակն էր պատժել 1915-ին Հայոց Յեղասպանութիւնը կազմակերպող եւ իրականացնող Երիտթուրքերու ղեկավարները, պատժել նաեւ 1918 թուականի Պաքուի հայկական ջարդի կազմակերպիչներն ու թուրքերուն հետ համագործակցած հայ դաւաճանները:

**ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԸ
ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ**



Զապել Եսայեան եղած է գրող, թարգմանիչ, հրապարակախօս, վիպասան, գրականագէտ, բանաստեղծուհի եւ համալսարանի դասախօս: Ան ծնած է Պոլիս, 4 փետրուար 1878-ին: 1892 թուականին աւարտած է Սկիւտարի Ս. Խաչ վարժարանը: Սակայն իր հարուստ գիտելիքները ձեռք բերած է ինքնաշխատութեամբ եւ ընթերցանութեամբ, հասնելով մինչեւ Փարիզի Սորպոն համալսարանի եւ «Collège de France»-ի գրականութեան ու փիլիսոփայութեան դասընթացներուն:

Ան շատ փոքր տարիքէն սիրած է գրականութիւնը: Իր հոր շնորհիւ, չորս տարեկանին արդէն կը կարդար հայերէն եւ դպրոց յաճախած շրջանին՝ ֆրանսերէն: Իր հայրը մեծ ազդեցութիւն ունեցած է նաեւ իր ազատասէր հոգիին եւ ազատամիտ կեցուածքին մէջ: Եսայեանի առաջին գրութիւնը՝ «Երգ առ գիշեր», հրատարակուած է Արշակ Զօպանեանի «Ծաղիկ» գրական թերթին մէջ, իր 17 տարեկանին:

Զապել Եսայեան իր գրական ու հանրային գործունէութեամբ, մեր մտաւորականութեան գլխաւոր անուններէն մէկը կը դառնայ գրելով «Ազատամարտ», «Բիւզանդիոն», «Սուրհանդակ» թերթերուն, «Անահիտ» գրական հանդէսին եւ այլ հրատարակութիւններու մէջ: Իր գործերէն են. «Սիլիխտարի պարտէզները», «Աւերակներուն մէջ», «Նահանջող ուժեր», «Վերջին բաժակը», «Կեղծ հանճարները», «Հլուները եւ ըմբոստները» եւ այլն:

Ան Ապրիլ 24-ի ջարդերուն ձերբակալուած մտաւորականներու ցանկերուն մէջ, կ'ըլլայ միակ կինը: Բարեբախտաբար, կը յաջողի խուսափիլ ձերբակալութենէն եւ ամիսներ ետք, կ'անցնի Պուլկարիա եւ ապա Կովկաս, ուր դարձեալ կը լծուի հանրային եւ գրական աշխատանքներու: Հայաստանի առաջին անկախութեան շրջանին, կը մեկնի Եւրոպա, Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան իբրեւ աշխատակից: 1933 թուականին վերջնականապէս կը հաստատուի Երեւան: Սակայն, 1937-ի Խորհրդային Միութեան օրերուն (Սթալինի ժամանակ), Եսայեան, այլ մեծ գրողներու կարգին, կ'աքսորուի դէպի Սիպերիա: Կ'ըսուի, թէ ան կը մեռնի Սիպերիոյ մէջ, հաւանաբար 1943-ին:



**ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ
ՀԱՅՐԵՆԻՔԸ**

**ՄԱՅՐ
ՀԱՅԱՍՏԱՆ**

Մայր Հայաստանը յուշահամալիր մըն է, որ կը գտնուի Երեւանի Յաղթանակ զբօսայգիին մէջ: Յուշարձանը կառուցուած է սեւ տուֆով, ունի 22 մետր բարձրութիւն եւ տեղադրուած է 1967 թուականին: Այս արձանի հեղինակն է, Հայաստանի ժողովրդական նկարիչ Արա Յարութիւնեան: 1995 թուականին, անցած է Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան Նախարարութեան ենթակայութեան մէջ: Թանգարանը գլխաւորաբար կը կեդրոնանայ երկու թեմաներու վրայ՝ Հայ ժողովուրդի մասնակցութիւնը երկրորդ համաշխարհային պատերազմին եւ Արցախեան ազատագրական պատերազմ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԿԱԶԸ



Հայկական կակաչը կակաչագգիներու ընտանիքի պատկանող բոյսի տեսակ մըն է: Ան 20-40 սմ. բարձրութեան հասնող բոյս մըն է: Ծաղիկը թաւշեայ է, կարմիր գոյնի, ցօղունը՝ կանաչ, իսկ տերեւները մազմզոտ: Կը ծաղկի յուլիս-օգոստոս ամիսներուն: Ծաղիկները համեմատաբար փոքր ու նուրբ են: Պտուղը 0.8 - 1.2 սմ. ունեցող պատեան է, իսկ սերմերը մանր են: Հայկական կակաչը կ'աճի 1700-էն մինչեւ 3400 մետր բարձրութեան գտնուող տարածքներու վրայ: Կը հանդիպինք Վանայ լիճին եւ Արարատ լեռան մօտիկ վայրերուն մէջ, ինչպէս նաեւ՝ Իրանի եւ Հայաստանի բարձր տարածքներուն վրայ:

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ - ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Կակաչ - հիրիկ - գերմաստ - մշկածաղիկ սխտորագգի - ձիւնափառ - ցրտածաղիկ ձիւնածաղիկ - քրքում - մանուշակ

ՄԵՂՈՒՆ



Մարտ ամսուն, ձմեռը կը հասնի իր աւարտին, եւ սկիզբ կ'առնէ գարունը: Գարնան, մեղունները ձմեռնաքունէն դուրս կու գան: Կարգ մը մեղուններ կ'ապրին 5-6 ամիս, բայց աշխատաւոր մեղունները ընդհանդապէս կ'ապրին 40 օրէն պակաս, սակայն իրենց կարճատեւ կեանքի

ընթացքին կ'այցելեն առնուազն 1000 ծաղիկ: Իրենց փեթակը կը կառուցեն իրենց իսկ մարմինէն դուրս եկած մոմով: Միջատներուն մէջ, միակն են, որ իրենց տունը կը կառուցեն ոչ թէ վարէն վեր, այլ հակառակը: Մայր մեղուն չէ, որ կը կերակրէ իր զաւակները, այլ աշխատաւոր մեղուններն են, որ կը կերակրեն իրենց մայրը:

Երբ իրենց փեթակը վտանգի մատնուի, անոնք երբեք փախուստի չեն դիմեր, այլ կը դիմադրեն մինչեւ վերջ:

Մեղուններու գոյութիւնը շատ կարեւոր է բոլոր ապրող էակներուն շարունակականութեան համար: Եթէ չըլլան մեղուններ, չեն ըլլար նաեւ բոյսեր. իսկ եթէ չըլլան բոյսեր, ո՛չ անասուններ, ո՛չ ալ մարդիկ ուտելիք կ'ունենան եւ բնականաբար կը վերանան:

Ա	Ե	Գ	Ե	Ը	Մ	Ա	Ս	Զ	Տ	Վ
Մ	Շ	Վ	Ա	Ծ	Ա	Ղ	Ի	Ի	Վ	Ո
Բ	Վ	Զ	Ի	Ի	Ն	Ա	Փ	Ի	Ա	Ռ
Հ	Գ	Հ	Ա	Բ	Ո	Ի	Վ	Ն	Ը	Բ
Ի	Ք	Ը	Ք	Ո	Ի	Մ	Վ	Ա	Ի	Ա
Ը	Տ	Հ	Դ	Հ	Շ	Ո	Խ	Ծ	Պ	Ը
Ի	Ե	Տ	Ի	Վ	Ա	Վ	Ա	Ա	Չ	Ի
Վ	Ը	Ս	Ն	Ղ	Վ	Ծ	Տ	Ղ	Ա	Ս
Ս	Խ	Տ	Ո	Ը	Ա	Զ	Գ	Ի	Ի	Է
Ց	Ը	Տ	Ա	Ծ	Ա	Ղ	Ի	Վ	Վ	Վ

ՀՅԴ Գանատայի Պատանեկան միութեան Մոնթրէալի «Դրօ» եւ Լաւալի «Գետաշէն» մասնաճիւղերու պատանիները կը գրեն, անդրադառնալով կիներու մասին, որոնցմէ ներշնչուած են իրենք:



Կին մը, որ զիս շատ կը ներշնչէ՝ իմ մեծ մայրս է: Մեծ մայրս շատ աշխատասէր, բարի եւ խելացի կին մը եղած է իր ամբողջ կեանքին ընթացքին, կին մը, որ ուրիշներուն կ'օգնէ եւ ընտանիքը շատ կը սիրէ: Այս արժէքները ինծի համար ալ շատ կարեւոր են, այդ պատճառով կ'ուզեմ մեծ մամայիս պէս շատ աշխատիլ, որպէսզի յառաջանամ կեանքիս մէջ: Կ'ուզեմ իրեն պէս ուրախ ըլլալ, նոյնիսկ եթէ դժուարութիւններէ կ'անցնիմ:

Լէոնէլ Քէտրեան

Թինա Կարապետեանը զիս ներշնչող կին մըն է: Աշխատասիրութիւնը եւ գեղասահքի մարզին հանդէպ նուիրումը կը փաստեն, թէ կարելի է մեր բոլոր նպատակներուն հասնիլ: Թինան ծնած է Գանատա, բայց հպարտութեամբ կը ներկայացնէ Հայաստանը միջազգային բեմին վրայ: Ինծի պէս Սուրբ Յակոբ Ազգային վարժարանը յաճախած է եւ հայ միջավայրի մէջ մեծցած: Ան կը հաստատէ, որ ինքնութիւնը միայն ծննդավայրով չի սահմանափակուիր, իսկ կարելի է հայրենիքին ծառայել երկրէն դուրս, իբր սփիւռքահայ: Թինա Կարապետեանը զիս կը քաջալերէ հայրենասէր մնալու եւ ազգիս հպարտութիւն պատճառելու իմ կատարած գործերուս միջոցաւ:

Միա Գանիգարօ

Կին մը, որ ամբողջ կեանքիս ընթացքին զիս ներշնչած է, իմ մեծ մամս է, որովհետեւ ան միշտ ինծի հոգ կը տանէր եւ միշտ կողքիս էր: Ամէն անգամ, որ բանի մը պէտք ունենայի, ան առանց մտածելու, անպայման կ'ընէր անմիջապէս: Զինք շատ կը սիրեմ: Այդ պատճառով, երբ մեծնամ ու զաւակներ կամ թոռներ ունենամ, կ'ուզեմ իր օրինակով ապրիլ, իրեն պէս ըլլալ: Առանց իմ մեծ մամայիս, չեմ գիտեր, թէ ինչպէս պիտի ապրիմ:

Ալեք Բանոյեան

Այն կինը, որ զիս ամէնէն շատը կը ներշնչէ, Սուէ Մայրիկն է: Նախելառաց, Սուէն ֆետայի մը եղած է իր ամուսինին՝ Սերոբ Աղբիւրի կողքին: Զիս ամէնէն առաջ կը ներշնչէ իր քաջութեամբ, որովհետեւ ան կռուեցաւ, որպէս ֆետայի, բայց նաեւ որպէս կին, նոյնիսկ երբ այս մէկը սովորական չէր այդ սերունդի կիներուն համար: Զիս նոյնպէս կը ներշնչէ իր դիմադրութեամբ: Երբ Սերոբը մահացաւ, Սուէն շարունակեց անոր պայքարը: Ան շարունակեց դիմադրել, ոչ միայն ամուսինին համար, ալ նաեւ ազգին ու հայրենիքին համար: Այս հրաշալի կինը տարիներով ծառայած է ու հոգ տարած իր ժողովուրդին, ինչպէս որ մայր մը հոգ կը տանի իր զաւակին: Այս պատճառով զինք կը կոչենք Սուէ Մայրիկ:

Բալիկ Սիւսահեան

Զիս ամէնէն շատ Սուէ Մայրիկը կը ներշնչէ, որովհետեւ ան շատ քաջ հայ կին մը եղած է: Ան պարզապէս գիւղացի աղջիկ մըն էր, ծնած Սասուն, 1868-ին:

13 տարեկանին ամուսնացած է ապագայ նշանաւոր ֆետայի Սերոբ Աղբիւրի հետ: Իր ամուսինին՝ Սերոբ Աղբիւրին մահէն ետք, ան անմիջապէս անցած է գործի եւ շարունակած անոր սկսած արդար պայքարը:

Սուէ Մայրիկը նաեւ մինակը մեծցուցած է իր զաւակները եւ Սերոբի բացակայութեան իր ուսերուն վրայ վերցուցած ընտանիքի պաշտպանութեան հոգը:

Ան մինչեւ իր մահը շարունակած է պաշտպանել իր ժողովուրդին իրաւունքները:

Արին Թորիկեան

Այդ կինը, որ զիս ամէնէն շատ կը ներշնչէ, Զապէլ Եսայեանն է: Զապէլը գրող մը եղած է, եւ անոր գրութիւնները Ատանայի ջարդին, Հայոց Յեղասպանութեան եւ հայ կիներու իրաւունքներուն մասին եղած են: Ան երբ աւարտեց Սուրբ Խաչ դպրոցը 1892-ին, երեք տարի ետք, գնաց Ֆրանսա, որպէսզի իր ուզած ուսումը ստանայ: Զապէլը, առաջին կիներէն էր, որ Կոստանդնուպոլիսը լքած է՝ իր ուսումը ուրիշ երկրի մէջ շարունակելու նպատակով: Երբ Ֆրանսա կ'ապրէր, ծանօթացած է Տիգրան Եսայեանին, որուն հետ յետոյ ամուսնացած է: Զապէլ Եսայեանը զիս կը ներշնչէ, որովհետեւ երբ կիները շատ իրաւունքներ չունէին, ան ուզած է գրող ըլլալ եւ Ֆրանսա գացած է, որպէսզի կարենայ ուսում ստանալ եւ հայ ժողովուրդին մասին գրել:

Լալէ Մալխասեան

Կինը, որ զիս ամէնէն շատը կը ներշնչէ, մայրս է: Որովհետեւ ան զիս մեծցուց գուրգուրանքով եւ վախով, որ ես ոչ մէկ բանէ չվստաստիմ եւ զիս դաստիարակեց, որ տիպար եւ հայրենասէր պատանի մը ըլլամ: Ինծի տուաւ ուժ եւ սորվեցուց, որ կեանքի պայմանները դիմագրաւեմ միշտ համբերութեամբ, ըլլամ միշտ յարգանքով եւ տիպար: Ան շատ մեծ սիրտ ունի եւ հոգատար է, բայց երբեմն ալ խիստ՝ սխալին հանդէպ: Միշտ մտիկ կ'ընէ մտահոգութիւններս եւ ինծի միշտ դէպի ճիշդ ճամբան կ'ուղղէ, երբեմն խնդրով եւ երբեմն ալ խստութեամբ:

Մովսէս Աղամեան

Ո՛Վ Կ՛ՈՒԶԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԷՏ

Մարտ ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկէտն է 15 ապրիլ 2026: Հետեւաբար, սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝ 3401 Olivar Asselin Montréal, Québec H4J 1L5

1- Ամէն տարի, մարտ 8-ին, ամբողջ աշխարհը կը նշէ...

- ա- Բանաստեղծութեան Միջազգային օրը:
- բ- Կիներու Միջազգային օրը:
- գ- Գարնան առաջին օրը:

2- Բանաստեղծութեան Միջազգային օրուան առթիւ, ինչեր տեղի կ'ունենան Հայաստանի դպրոցներուն, թանգարաններուն, գրադարաններուն եւ մշակոյթի կենդրոններուն մէջ:

- ա- Բանաստեղծներու հետ հանդիպումներ կը կազմակերպուին եւ տեղի կ'ունենան գիրքերու շնորհանդէսներ, ընթերցումներ եւ հանրային քննարկումներ:
- բ- Յոյցեր տեղի կ'ունենան:
- գ- Երգ ու պարի ելոյթներ տեղի կ'ունենան:

3- Ինչո՞ւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը չէր կրնար անպատիժ ձգել Հայոց Յեղասպանութիւնը ծրագրող ու կազմակերպող ղեկավարները:

- ա- Որովհետեւ երբ Համաշխարհային Առաջին պատերազմը վերջացաւ, Հայոց Յեղասպանութիւնը ծրագրող ու կազմակերպողները մահուան դատաւճիռ ստացան: Բայց փախան, եւ ոչ մէկ ճիգ թափուեցաւ արդարադատութիւնը իրականացնելու համար:
- բ- Որովհետեւ Հայոց Յեղասպանութիւնը ծրագրող ու կազմակերպողները ներողութիւն չխնդրեցին:
- գ- Որովհետեւ երբ Համաշխարհային Առաջին պատերազմը վերջացաւ, անոնք մէկ տարի բանտարկութեան ենթարկուեցան:

4- Ինչ նպատակով ծրագրուեցաւ «Նեմեսիս» գործողութիւնը:

- ա- Պատժելու ուսում չստացողները:
- բ- Պատժելու 1915-ին Հայոց Յեղասպանութիւնը կազմակերպող եւ իրականացնող Երիտթուրքերու ղեկավարները
- գ- Պատժելու անհաւատները:

5- 15 մարտ 1921-ին, ո՞վ սպաննեց Թալէաթ Փաշան:

- ա- Արշալիր Շիրակեանը:
- բ- Արմէն Գարօն:
- գ- Սողոմոն Թեփիլիբեանը:

6- Յունական դիցաբանութեան մէջ, ինչի աստուածուհին էր Նեմեսիսը:

- ա- Վրէժխնդրութեան:
- բ- Գեղեցկութեան:
- գ- Պողաբերութեան:

7- Ո՞ր հայ գրողի գործերէն են «Սիլիստարի պարտէզները», «Աւերակներուն մէջ» եւ «Վերջին բաժակը»:

- ա-Սիրան Սեզայի:
- բ- Զապէլ Եսայեանի:
- գ- Սրբուհի Տիսաբի:

8- 1915-ին, Զապէլ Եսայեան հրաշքով կ'ազատի ջարդերէն, բայց 1937-ի Խորհրդային Միութեան օրերուն, ինչ կը պատահի:

- ա- Ան կը մահանայ Թոքախտէ:
- բ- Ան կ'աքսորուի դէպի Սիպերիա:
- գ- Ան կը սպաննուի թրքական յարձակումի մը ընթացքին:

9- Ո՞ր կը գտնուի Մայր Հայաստան յուշահամալիրը:

- ա- Մանկական այգիին մէջ:
- բ- Կոմիտասի անուան զբօսայգիին մէջ:
- գ- Երեւանի Յաղթանակ զբօսայգիին մէջ:

10- Ո՞ր կը ծաղկին հայկական կակաչներ:

- ա- Վանայ լիճին եւ Արարատ լեռան մօտիկ վայրերուն մէջ:
- բ- Պոլսոյ մէջ:
- գ- Թիֆլիսի մէջ:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Եսենիա Քելլեան
Զեալոյացք՝ Լորի Խաչերեանի